Արին

Բնակչության թիվը՝ 340

Արին համայնքը գտնվում է Վայոց ձորի մարզի վարչական տարածքում, մարզկենտրոնից 25 կմ հեռավորության վրա. դեպի հարավ-արևելք, ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա: Համայնքը հյուսիս արևելքից սահմանակից է Հերհեր, հյուսիս արևմուտքից՝ Մալիշկա, հարավից՝ Ազատեկ գյուղերի հանդամասերին:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ, մեղվապահությամբ և անասնապահությամբ: Համայնքում աշունը երկարատև է, իսկ ձմեռը՝ ցուրտ ու քամոտ, որը տևում է 3.5-4 ամիս:

Գյուղը մինչև 1978 թվականը կոչվել է Դայլախլու: Գյուղի և տարածքի անվան մասին նախնիներից փոխանցվել ու մեզ է հասել հետևյալ պատմությունը.

Գյուղի տարածքով անցնող մի նշանավոր հայ անձնավորություն, տեսնելով ձիերի երամակը, զամբիկների հետևից եկող քուռակների խաղը, հիացել ու ասել է. <<Ինչ լավ քուռկախաղ է>>: Ու քանի որ այդ ժամանակ ձիու նկատմամբ պաշտամունք է եղել, բնակիչներն այդ տարածքը կոչել են Քուռկախաղաց տեղեր:

Հետագայում, հավանաբար 1604 թվականին, Արին համայնքը վերաբնակեցվել է այլազգիներով, որոնք Քուռկախաղաց անունն իրենց լեզվով վերանվանել են Դայլախլու:

Հնագույն հուշարձաններից է Սուլթանի քարայրը: Քարայրի ավերակների մեջ նկատվում են երկու պարիսպներ՝ բոլորաձև՝ 3-4 արշին բարձրությամբ: Գտնվել են հղկված քարի մնացորդներ, քարե դարի ժամանակվա իրեր ու առարկաներ: Դա ևս վկայում է այն մասին, որ Արին գյուղը, որպես բնակավայր հայտնի է եղել դեռևս քարե դարից:

Գյուղի տարածքում է գտնվում 1947 թ. կառուցված Վ. Ի. Լենինի արձանը՝ պատվանադանի վրա: Գյուղից պարզ տեսանելի է Արարատ լեռն իր Սիս և Մասիս գագաթներով:

Գյուղից 3կմ դեպի հյուսից-արևելք գտնվում է հրաբխային կենտրոն Դալի թափան, որի հետևանքով 735 թվականին կործանվել է Մոզ քաղաքը:

Գյուղում գործում են՝ դպրոց, բուժկետ, ակումբ, գյուղապետարան: Համայնքը սնվում է գազի և էլ.սնուցման կենտրոնական ցանցից, ունի 2 տրանսֆորմատորներ:

Համայնքն ունի խմելու ջրի 1 ինքնահոս ջրաղբյուր 8-լ/վրկ. ելքով:

Համայնքի տարածքում կա 1 հատ ՕԿՋ 300 մ3, ջրամատակարարումը ստորգետնյա է, մեկուսացված: Համայնքն ապահովված է ավտոմատ հեռախոսակապով:

Գյուղին է պատկանում Հերհերի ջրամբարը՝ 74 մետր խորությամբ: Գյուղն ունի դպրոց և բուժկետ: